587 Անարդար է այս աշխարհը,

1. Անարդար է այս աշխարհը,
Որտեղ Դու չկաս, իմ Հիսուս:
Հոգիս ցավով լալիս է,
Որտեղ Դու չկաս, իմ Հիսուս:
Մարդիկ մեղքով ցնծում են,
Որտեղ Դու չկաս, իմ Հիսուս:
Սրբությունը ծաղրվում է,
Որտեղ Դու չկաս, իմ Հիսուս:
Առանց Քեզ, Հիսո՛ւս, տխուր եմ,
Առանց Քեզ, Հիսո՛ւս, լալիս է հոգիս,
Առանց Քեզ, ես մենակ եմ, մենակ եմ:

2. Աղոթքները մեր, Տե՛ր, լսիր,
Ողորմի՛ր նրանց, Տե՛ր Հիսուս:
Աղաչանքը, Տե՛ր, լսիր,
Ողորմի՛ր նրանց, Տե՛ր Հիսուս:
Մեղքից, մահից ազատի՛ր,
Ողորմի՛ր նրանց, Տե՛ր Հիսուս:
Կույր աչքերը նրանց բացիր,
Ողորմի՛ր նրանց, Տե՛ր Հիսուս:
Առանց Քեզ, Հիսո՛ւս, տխուր եմ,
Առանց Քեզ, Հիսո՛ւս, կորած են մարդիկ,
Առանց Քեզ կորած են, կորած են:

3. Սիրովդ նրանց այցելիր,
Ովքեր Քեզ չունեն, իմ Հիսուս:
Քո Սուրբ Հոգով նրանց հպվիր,
Ովքեր Քեզ չունեն, իմ Հիսուս:
Դու Գողգոթա նրանց կանչիր,
Ովքեր Քեզ չունեն, իմ Հիսուս:
Քո սուրբ արյամբ նրանց մաքրիր,
Ովքեր Քեզ չունեն, իմ Հիսուս:
Առանց Քեզ, Հիսո՛ւս, տխուր եմ,
Առանց Քեզ, Հիսո՛ւս, խաչը անզոր է,
Առանց Քեզ խաչն անզոր է, անզոր է: